




EU4Business



ՏՀԶԿ

Հայաստանի Ձեռնարկությունների Վիճակագրության Տեղեկագիր. 2018թ.



ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՏՀԶԿ-ն եզակի հարթակ է, որտեղ կառավարությունները միասին աշխատում են համաշխարհայնացման տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծման ուղղությամբ: ՏՀԶԿ-ն նաև նոր զարգացումներն ու խնդիրները հասկանալու և դրանց արձագանքելու հարցում կառավարություններին օգնելու առաջնագծում է. այդ խնդիրներից են կորպորատիվ կառավարումը, տեղեկատվական տնտեսությունը և ծերացող բնակչությունը: Կազմակերպությունն առաջարկում է մի միջավայր, որտեղ կառավարությունները կարող են համեմատել քաղաքականության իրենց փորձը, փորձել լուծումներ գտնել ընդհանուր խնդիրներին, ներկայացնել լավագույն գործելակերպերը և աշխատել ներպետական ու միջազգային քաղաքականությունների համակարգման ուղղությամբ: ՏՀԶԿ անդամ երկրներն են Ավստրալիան, Ավստրիան, Բելգիան, Կանադան, Չիլին, Չեխիայի Հանրապետությունը, Դանիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Հունգարիան, Իսլանդիան, Իռլանդիան, Իսրայելը, Իտալիան, Ճապոնիան, Կորեան, Լատվիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Մեքսիկան, Նիդեռլանդները, Նոր Զելանդիան, Նորվեգիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Սլովակիայի Հանրապետությունը, Սլովենիան, Իսպանիան, Շվեդիան, Շվեյցարիան, Թուրքիան, Միացյալ Թագավորությունը և Միացյալ Նահանգները: Եվրոպական Միությունը մասնակցում է ՏՀԶԿ աշխատանքներին:

www.oecd.org

ՏՀԶԿ ԵՎՐԱՍԻԱՅԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՏՀԶԿ Եվրասիայի մրցունակության ծրագիրը, որը մեկնարկել է 2008 թվականին, օգնում է արագացնել տնտեսական բարեփոխումները և բարելավել գործարարության միջավայրը՝ երկու տարածաշրջաններում կայուն տնտեսական աճ և զբաղվածություն ապահովելու նպատակով. այդ տարածաշրջաններն են Կենտրոնական Ասիան (Աֆղանստան, Ղազախստան, Ղրղզստան, Մոնղոլիա, Տաջիկստան, Թուրքմենստան և Ուզբեկստան) և Արևելյան Եվրոպան ու Հարավային Կովկասը (Հայաստան, Ադրբեյջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա): Ծրագիրը նպաստում է Գլոբալ կապերի քարտուղարության կողմից իրականացվող՝ ՏՀԶԿ տեղեկատվական ռազմավարությանը:

www.oecd.org/globalrelations/eurasia.htm

ԵՄ-Ն ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ

«ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնությունը ներկայացնում է Եվրոպական Միության կողմից Արևելյան գործընկերության տարածաշրջանում փոքր և միջին ձեռնարկություններին (ՓՄՁ-ներ) տրամադրվող ողջ օժանդակությունը, որի շրջանակներում համագործակցում են ԵՄ-ն, ԵՄ անդամ պետություններն ու վեց գործընկեր երկրներ՝ Հայաստան, Ադրբեյջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա:

www.eu4business.eu

Բովանդակություն

Նախաբան	5
Երախտիքի խոսք.....	7
Հայաստանի ՓՄՁ ոլորտի ցուցանիշների գնահատում	8
Ընթերցողի ուղեցույց	12
Վիճակագրական միավորներ.....	12
Բացվածքն՝ ըստ ձեռնարկությունների չափի.....	12
Աշխատանքի արտադրողականությունը	13
Դրամական փոփոխականներ	13
Երկրների կոդեր	14
Տնտեսական գործունեության ոլորտներ	15
Սահմանումներ	16
Հայաստանի ՓՄՁ ոլորտի ընդհանուր նկարագրություն	18
ՓՄՁ մասնակցությունը ձեռնարկատիրական տնտեսության կազմում	18
ՓՄՁ մասնակցությունն ըստ մարզերի	19
Ձեռնարկությունների ծննդյան և մահվան գործակիցն ըստ մարզերի.....	20
1. ՓՄՁ-ների թվաքանակ	21
1.1. Ձեռնարկությունների թվաքանակն ըստ չափի և գործունեության ոլորտի	21
1.2. Ձեռնարկությունների մասնաբաժինն ըստ չափի և գործունեության տեսակի	21
1.3. Ձեռնարկությունների մասնաբաժինն ըստ չափի, Հայաստան և մի քանի ՏՀԶԿ երկրներ.....	22
1.4. Ձեռնարկությունների թվաքանակն ըստ մարզերի.....	23
1.5. Ձեռնարկությունների մասնաբաժինն ըստ մարզերի.....	23
1.6. Ձեռնարկությունների թվաքանակն ըստ մարզերի և չափի.....	24
1.7. Ձեռնարկությունների թվաքանակը հազար շնչի հաշվով, ըստ մարզերի.....	25
2. Զբաղվածությունը ՓՄՁ ոլորտում.....	26
2.1. Զբաղվածությունն ըստ ոլորտների և ձեռնարկությունների չափի.....	26
2.2. Զբաղվածությունն ըստ ոլորտների և ձեռնարկությունների չափի, 2017 և 2016 թվականների համեմատություն.....	26
2.3. Զբաղվածության մասնաբաժինն ըստ ոլորտների և ձեռնարկությունների չափի.....	27
2.4. Զբաղվածության մասնաբաժինն ըստ ձեռնարկությունների չափի, Հայաստան և մի քանի ՏՀԶԿ երկրներ	27
2.5. Զբաղվածությունն ըստ մարզերի	28
2.6. Զբաղվածության մասնաբաժինն ըստ մարզերի և ձեռնարկությունների չափի.....	28
3. ՓՄՁ շրջանառությունը.....	29
3.1. Շրջանառությունն ըստ ձեռնարկությունների չափի և տնտեսության ճյուղերի.....	29
3.2. Շրջանառության մասնաբաժինն ըստ չափի և տնտեսության ճյուղերի.....	29
3.3. Շրջանառությունն ըստ ձեռնարկությունների չափի, Հայաստան և մի քանի ՏՀԶԿ երկրներ.....	30

3.4. Շրջանառությունն ըստ մարզերի	30
4. ՓՄՁ արտահանման ծավալները.....	31
4.1. Արտահանման ծավալներն ըստ ձեռնարկությունների չափի և արտահանման ուղղությունների	31
4.2. Արտահանման մասնաբաժինն ըստ ձեռնարկությունների չափի և արտահանման ուղղությունների	31
5. Միջին ամսական աշխատավարձը ՓՄՁ-ներում.....	32
5.1. Մեկ անձի միջին անվանական ամսական աշխատավարձը.....	32
5.2. Մեկ անձի միջին անվանական ամսական աշխատավարձն ըստ գործունեության ոլորտների	32
5.3. Միջին ամսական աշխատավարձն ըստ ձեռնարկությունների չափի, Հայաստան և մի քանի ՏՀԶԿ երկրներ	33
5.4. Մեկ անձի միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ մարզերի.....	33
6. ՓՄՁ-ների ստեղծած ավելացված արժեքը	34
6.1. Ավելացված արժեքն ըստ ձեռնարկությունների չափի և գործունեության ոլորտների	34
6.2. Ավելացված արժեքն ըստ չափի խմբերի և գործունեության ոլորտների.....	34
6.3. Ավելացված արժեքն ըստ ձեռնարկությունների չափի, Հայաստան և մի քանի ՏՀԶԿ երկրներ	35
7. ՓՄՁ-ների աշխատանքի արտադրողականությունը	36
7.1. ՓՄՁ-ների և խոշոր ընկերությունների աշխատանքի արտադրողականությունն՝ ըստ գործունեության ոլորտների	36
7.2. Աշխատանքի արտադրողականություն, միջազգային համեմատություն	37
7.3. Աշխատանքի արտադրողականությունն ըստ ձեռնարկությունների չափի, հանքագործություն և բացահանքերի շահագործում	37
7.4. Աշխատանքի արտադրողականությունն ըստ ձեռնարկությունների չափի, մշակող արդյունաբերություն.....	38
7.5. Աշխատանքի արտադրողականությունն ըստ ձեռնարկությունների չափի, շինարարություն	38
7.6. Աշխատանքի արտադրողականությունն ըստ ձեռնարկությունների չափի, տեղեկատվական և հաղորդակցային ծառայություններ	39
7.7. Աշխատանքի արտադրողականությունն ըստ ձեռնարկությունների չափի, մասնագիտական, զիտական և տեխնիկական գործունեություն.....	39
8. Ձեռնարկությունների ծնունդ.....	40
8.1. Բացված ձեռնարկությունների թվաքանակն ըստ ձեռնարկությունների չափի և գործունեության ոլորտների.....	40
8.2. Ձեռնարկությունների ծնունդի գործակիցն ըստ ձեռնարկությունների չափի և գործունեության ոլորտների	40
8.3. Ձեռնարկությունների ծնունդի գործակիցը, Հայաստան և մի քանի ՏՀԶԿ երկրներ	41
8.4. Ձեռնարկությունների ծնունդն ըստ մարզերի.....	41

9. Ձեռնարկությունների մահ	42
9.1. Ձեռնարկությունների մահերի թվաքանակն ըստ ձեռնարկությունների չափի և գործունեության ոլորտների.....	42
9.2. Ձեռնարկությունների մահվան գործակիցն ըստ ձեռնարկությունների չափի և գործունեության ոլորտների.....	43
9.3. Ձեռնարկությունների մահվան գործակիցը, Հայաստան և մի քանի ՏՀԶԿ երկրներ ..	43
9.4. Ձեռնարկությունների մահերի թվաքանակն ըստ մարզերի.....	44
10. Նորաստեղծ ձեռնարկություններ	45
10.1. Նորաստեղծ ձեռնարկությունների մասնաբաժինն ըստ չափի և գործունեության ոլորտի.....	45
10.2. Նորաստեղծ ձեռնարկությունների մասնաբաժինը, Հայաստան և մի քանի ՏՀԶԿ երկրներ.....	45
10.3. Նորաստեղծ ձեռնարկությունների մասնաբաժինն ըստ չափի և մարզերի	46
10.4. Նորաստեղծ ձեռնարկությունների թվաքանակն ըստ մարզերի.....	46
Օգտագործված գրականություն	47
Հավելված	48
Գների ինդեքսներ ու փոխարժեքներ.....	48

Նախարան

Այս տեղեկագիրը ներկայացնում է Հայաստանի ՓՄՁ ոլորտի պատկերը. տեղեկագիրը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի գործարար հատվածի պաշտոնական վիճակագրության հիման վրա (Armstat, www.armstat.am):

Եվրոպայի Փոքր բիզնեսի ակտի (SBA) շրջանակներում 2015 թվականին կատարված գնահատման արդյունքներից ելնելով ընդգծվել է ՓՄՁ ոլորտի պաշտոնական վիճակագրության առկայությունը և հասանելիությունն ընդլայնելու անհրաժեշտությունը, ինչը հատկապես կարևորվել է Հայաստանում ՓՄՁ ոլորտի քաղաքականությունների մշակումը, մոնիտորինգն ու գնահատումը բարելավելու առումով (*ՓՄՁ քաղաքականության ցուցիչ. Արևելյան գործընկերության երկրներ 2016թ.,* ՏՀԶԿ և այլք, 2015թ): Ի գիտություն ընդունելով այդ գնահատման արդյունքները՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը դիմել է ՏՀԶԿ աջակցությանը՝ պետական մարմինների գործարար հատվածի պաշտոնական վիճակագրական տվյալներ հավաքելու, ներդաշնակեցնելու, վերլուծելու և տարածելու կարողությունների բարելավման համար, մասնավորապես կառուցվածքային և ժողովրդագրական վիճակագրության մասով, որն անհրաժեշտ է ՓՄՁ-ների կատարողականը գնահատելու համար:

Աշխատանքը կատարել են ՏՀԶԿ Գլոբալ կապերի քարտուղարությունը և Վիճակագրության ու տվյալների տնօրինությունը՝ ՏՀԶԿ կողմից Արևելյան գործընկերության երկրներում իրականացվող «ԵՄ-ն բիզնեսի համար. քաղաքականություններից գործողություն» բազմերկրյա ծրագրի շրջանակներում: Ֆինանսական աջակցությունը տրամադրել է Եվրոպական Միությունը՝ «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության շրջանակներում:

2017թ. հոկտեմբերից մինչև 2018թ. հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում ՏՀԶԿ-ն Երևանում կազմակերպել է վիճակագրության վերաբերյալ երեք աշխատաժողով (2017թ. հոկտեմբերի 4-ին, 2018թ. մարտի 15-ին և 2018թ. հոկտեմբերի 4-ին): Աշխատաժողովների հիմնական թեման եղել է գործարար հատվածի կառուցվածքային և ժողովրդագրական վիճակագրության կազմումը, տվյալների տարբեր շարքերից ստացված բիզնես տվյալների կապակցումը և վիճակագրական տեղեկությունների տարածումը: Աշխատաժողովները նպատակաուղղված էին համապատասխան պետական մարմինների կարողությունների և վիճակագրության ոլորտում նրանց համագործակցության զարգացմանը: Աշխատաժողովներից բացի, ՏՀԶԿ-ն Վիճակագրական կոմիտեին աջակցել է մեթոդաբանության ներդրման ընթացիկ աշխատանքներում, որպեսզի հնարավոր լինի գործարարության ցուցանիշների մշակման և հավաքման գործընթացը համապատասխանեցնել [«Եվրոստատ-ՏՀԶԿ գործարար հատվածի ժողովրդագրական վիճակագրության ձեռնարկի»](#) և [«Ձեռնարկատիրական գործունեության սահմանում. տվյալներ հավաքող կառույցների համար օգտակար սահմանումներ»](#) և [«Ձեռնարկատիրության դիտարկման և չափման հայեցակարգ»](#) աշխատանքային ուղեցույցերի պահանջներին: Աշխատաժողովների կարևոր արդյունք էր ՀՀ Վիճակագրության

կումիտեի [«Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2018»](#) առաջին վիճակագրական տեղեկագրի հրատարակումը, որը հետևում է սույն տեղեկագրում առաջարկված ՓՄՁ վիճակագրության ներկայացման կառուցվածքին:

Տեղեկատվական բացերն ու տվյալների մատչելիության խնդիրները հասկանալու համար ծրագրի ընթացքում ՏՀԶԿ-ն մի շարք հանդիպումներ է ունեցել պետական կառույցների և պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի մասնագետների հետ, այդ թվում՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն և ՓՄՁ քաղաքականության համար պատասխանատու ստորաբաժանումներ, Վիճակագրական կումիտե, ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն (ՓՄՁ ԶԱԿ), ՀՀ ֆինանսների նախարարություն - Հարկային վարչարարության և մաքսային մարմիններ, Կենտրոնական բանկ, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստր, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ), Հայաստանում ԵՄ պատվիրակություն, ԵՄ-ի «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» (SMEDA) ծրագիր, որն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից, Բիզնեսի աջակցման գրասենյակ (ԲԱԳ) և անկախ փորձագետներ:

Երախտիքի խոսք

Մույն փաստաթուղթը պատրաստվել է ՏՀԶԿ Վիճակագրության և տվյալների տնօրինության Առևտրի և մրցունակության վիճակագրության բաժնում: ՏՀԶԿ-ն իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ վիճակագրական ծառայությանը գերազանց համագործակցության և կատարված ուշագրավ աշխատանքի համար՝ արդեն իսկ պատրաստ ցուցանիշների ցանկը համեմատաբար կարճ ժամանակահատվածում նոր ցուցանիշներով համալրելու ուղղությամբ: Մասնավորապես, ՏՀԶԿ-ն շնորհակալություն է հայտնում՝

Հայաստանի Հանրապետության պետական վիճակագրական կոմիտեի անդամ պրն. Գագիկ Անանյանին.

Բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգման բաժնի պետ պրն. Վարդան Արևշատյանին.

Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ տկն. Լուսինե Քալանթարյանին.

Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ տկն. Լուսյա Խաչատրյանին.

Արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ պրն. Աշոտ Անանյանին.

Շինարարության վիճակագրության բաժնի պետ տկն. Մարիամ Պետրոսյանին.

Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ տկն. Անահիտ Հարությունյանին.

Տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ պրն. Գեորգի Թորոսյանին և այդ բաժինների աշխատակիցներին:

ՏՀԶԿ-ն հատուկ շնորհակալություն է հայտնում ՀՀ կառավարությանը, մասնավորապես ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար պրն. Տիգրան Խաչատրյանին, փոխնախարար պրն. Հակոբ Ավագյանին և ՓՄՁ զարգացման վարչության պետ պրն. Կորյուն Գևորգյանին՝ քաղաքականության հարթությունում առաջնահերթությունների և անհրաժեշտ տվյալների վերաբերյալ խորհուրդների համար:

Մեծ գնահատանքի է արժանի նաև Լիտվայի և Դանիայի վիճակագրական ծառայությունների փորձագետների աջակցությունը՝ ըստ ձեռնարկությունների չափերի կառուցվածքային վիճակագրության հետագա զարգացման, մասնավորապես ավելացված արժեքի տվյալների մշակման հարցում: Այդ օգնությունը տրամադրվել է ԵՄ-ի «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» (SMEDA) ծրագրի շրջանակներում, միջնորդված Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից:

Հայաստանի ՓՄՁ ոլորտի ցուցանիշների գնահատում

«ԵՄ-ն բիզնեսի համար. քաղաքականությունից՝ գործողություն» բազմերկրյա ծրագրի շրջանակներում ՏՀԶԿ Վիճակագրության և տվյալների տնօրինությունն ուսումնասիրել է, թե Հայաստանում ինչպես է կազմակերպվում գործարար հատվածի վիճակագրության արտադրությունը: Նախանշվել են գործարար հատվածի վիճակագրության և ցուցանիշների հավաքմամբ և/կամ կազմմամբ (կոմպիլյացիա) զբաղվող պետական և վարչական մարմինները, ինչպես նաև ուսումնասիրվել են առկա բոլոր փոփոխականների շարքերը: Ուսումնասիրությունը նպատակաուղղված է եղել տվյալների առկայության և վիճակագրության արտադրության գործընթացի՝ բարելավման կարիք ունեցող բնագավառներին:

Ուսումնասիրությունը շատ կարևոր էր հետևյալ առումներով.

- **Ընդգծել Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության դերը** որպես հիմնական կառույց, որը պատասխանատու է տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության արտադրության համար: Տվյալների կապակցվածության և որակի նկատառումներով կարևոր է գործարար հատվածի ժողովրդագրության և տնտեսության մեջ գործարար համակազմի մասնակցության վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը կենտրոնացնել մեկ հաստատությունում՝ վիճակագրական ծառայությունում, որը լավագույն տարբերակում պետք է օգտվի վարչական տարբեր մարմիններից ստացված վիճակագրական տվյալներից (օր.՝ հարկային, մաքսային, սոցիալական ապահովության մարմիններ):
- **Հստակեցնել վարչարարության և վիճակագրության նպատակներով տրվող «ՓՄՁ» իրավական սահմանման տարբերությունը.** ՏՀԶԿ երկրներում ընդունված է վարչարարության նպատակով կիրառվող «ՓՄՁ» իրավական սահմանումը տարանջատել վիճակագրության նպատակով կիրառվող «ՓՄՁ» սահմանումից, որը տրվում է գործարար հատվածի վիճակագրության արտադրության նպատակով:

Այս առումով ՀՀ ՎԾ մոտեցումը, համաձայն որի «ՓՄՁ» սահմանման միակ չափանիշ է դիտարկվում աշխատողների թիվը, համապատասխանում է միջազգային լավագույն փորձին:
- **Մկսել կարևոր տվյալների մշակումներ,** այդ թվում գործարար հատվածի ժողովրդագրական վիճակագրության և ձեռնարկությունների ստեղծած ավելացված արժեքի պատրաստում (կոմպիլյացիա)՝ ըստ ձեռնարկությունների դասակարգման և հիմք ընդունելով աշխատողների թիվը:

Վերջին շրջանում գործարար հատվածի վիճակագրության կազմման ՎԾ մեթոդաբանությունը զուգամիտվել է Եվրոպական և միջազգային

չափանիշներին: ՎՃ-ը վարում է գործարար հատվածի վիճակագրական բիզնես-ռեզիստր, որը գործարար հատվածի վիճակագրության արտադրության ողնաշարն է և համապատասխանում է *Վիճակագրական բիզնես ռեզիստրների վերաբերյալ ուղեցույցներին* (UNECE, 2015թ.): Նաև, գործարար հատվածի հետազոտություններից բացի գործարար հատվածի պաշտոնական վիճակագրություն պատրաստելու համար ՎՃ-ը ներկայումս հիմնվում է մի շարք վարչական վիճակագրական տվյալների, մասնավորապես՝ Պետական եկամուտների կոմիտեից կանոնավոր հիմունքով ստացվող հարկային տվյալների վրա:

Առաջարկություններ ՓՄՁ-ների և ձեռնարկատիրության մասին տվյալների մշակման վերաբերյալ

Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) և ձեռնարկատիրության վերաբերյալ վիճակագրական տվյալների և ցուցանիշների ուսումնասիրության արդյունքներով՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը (Armstat) ներկայացվել են հետևյալ առաջարկությունները.

A. *Վիճակագրական միավորներ.*

- a. Ներկա ժամանակահատվածում գործարար հատվածի վիճակագրության կազմման համար որպես դիտարկման և վիճակագրական միավոր ՎԾ-ն կիրառում է իրավաբանական անձը: Նախընտրելի միջազգային փորձի հիման վրա առաջարկվում է որպես վիճակագրական միավոր դիտարկել *ձեռնարկությունը*, ընդ որում յուրաքանչյուր ձեռնարկություն կարող է բաղկացած լինել իրար հետ սեփականության և/կամ վերահսկողության կապով կապակցված մեկ կամ մի քանի իրավաբանական անձերից (*UNECE ուղեցույցը վիճակագրական բիզնես ռեգիստրների վերաբերյալ, 2015թ.*):

B. *Մասնավոր հատվածի ապահոված զբաղվածության չափում*

- a. Ներկա ժամանակահատվածում գործարար հատվածում զբաղվածությունը չափելու համար ՎԾ-ն օգտագործում է աշխատողների թիվը: Առաջարկվում է նաև չափել տնտեսվարողների մոտ զբաղված անձանց ընդհանուր թիվը (այսինքն՝ վարձու աշխատողներ գումարած ինքնազբաղվածներ, [Eurostat-OECD Manual on Business Demography Statistics, 2007](#)), և գործարար հատվածի կառուցվածքային վիճակագրության նպատակով զբաղվածների թիվը հիմք ընդունել ձեռնարկությունների չափի խումբը որոշելու համար:

C. *Ներկա ժամանակահատվածում պատրաստվող փոփոխականների լրացուցիչ բացվածք*

- a. Մշակել գերփոքր ձեռնարկությունների ավելացված արժեքի մասին վիճակագրություն.
- b. Եթե տվյալների գաղտնիության խնդիր չկա, հրապարակել գործարար հատվածի վիճակագրությունն ըստ ձեռնարկությունների չափի խմբերի, գործունեության ոլորտի մանրամասնված մակարդակում - ըստ Տնտեսական գործունեության տեսակների (ISIC) երկնիշ կամ եռանիշ դասակարգման:

D. *Նոր վիճակագրության և ցուցանիշների կազմում*

- a. Մշակել գործարար հատվածի ժողովրդագրական ցուցանիշներ, որոնք կնկարագրեն ստեղծված/փակված աշխատատեղերը ըստ ձեռնարկությունների ստեղծման և փակման, զբաղվածության մակարդակը նորաստեղծ ձեռնարկություններում, արագ աճող ձեռնարկությունների թիվն ու ցուցանիշները, նրանց մասնաբաժինն ընդհանուր զբաղվածության կազմում, և գործարար

հատվածի ժողովրդագրական վիճակագրությունը միայն գործատու ձեռնարկությունների ենթաշարքի մասով.

- b. Տվյալներ մշակել արտաքին առևտրային գործունեության վերաբերյալ՝ ըստ ձեռնարկությունների առանձնահատկությունների, և պատրաստել նոր վիճակագրություն, որտեղ կհաշվառվի ՓՄՁ մասնակցությունը գլոբալ արժեքի շրջայում կապելով գործարար հատվածի վիճակագրությունը, մաքսային ռեգիստրները և տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ առկա այլ տվյալների շարքերը.
- c. Ուսումնասիրել հիմնարկների մակարդակով տարածաշրջանային վիճակագրություն կազմելու հնարավորությունը՝ ձեռնարկությունների ապահոված զբաղվածության տարածաշրջանային բաշխվածության ավելի ճշգրիտ հաշվարկը ստանալու համար:

E. Տվյալների տարածում

- a. Կիրարկել տվյալների տարածման լավագույն միջազգային սկզբունքները (տես [Recommendation of the OECD Council on Good Statistical Practice, 2015](#)/ ՏՀԶԿ խորհրդի առաջարկությունները լավագույն վիճակագրական աշխատակարգի վերաբերյալ, 2015թ. և Վիճակագրության եվրոպական նորմերը, 2017թ.):
- b. Բարելավել արդեն իսկ առկա առցանց գործիքների և աղբյուրների, մասնավորապես <http://armstatbank.am-ի> մասին սպառողների իրազեկությունը և դրանցից օգտվելու հնարավորությունը:
- c. Թողարկել տեղեկությունների տարածման նոր գործիքներ, այդ թվում ամենամյա գրքույկ, որտեղ կներկայացվեն ՓՄՁ-ների և գործարարության ցուցանիշները և որոնք հասանելի կլինեն նաև առցանց:
 - ✓ Այս խորհուրդն իրագործվել է Արմստատի «[Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2018](#)» առաջին վիճակագրական տեղեկագրի հրատարակումով, որը հետևում է սույն տեղեկագրում առաջարկված ՓՄՁ վիճակագրության ներկայացման կառուցվածքին:

Ընթերցողի ուղեցույց

Հայաստանի ՓՄՁ վիճակագրության այս տեղեկագրում ներկայացված է Հայաստանի գործարար հատվածի կառուցվածքը և կատարողականը ներկայացնող առանցքային ցուցանիշների ընտրանի: Այն կազմվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պատրաստած վիճակագրության հիման վրա (www.armstat.am): Միջազգային համեմատության նպատակով տվյալներ են վերցվել ՏՀԶԿ Գործարար հատվածի վիճակագրական և ժողովրդագրական վիճակագրության տվյալների շտեմարանից (<http://dx.doi.org/10.1787/sdbs-data-en>):

Վիճակագրական միավորներ

ՀՀ ՎԾ պատրաստած գործարար հատվածի վիճակագրության մեջ ձեռնարկատիրական տնտեսությունը դիտարկելու և վերլուծելու նպատակով որպես վիճակագրական միավոր օգտագործվում է իրավաբանական անձը: Իրավաբանական անձի հիման վրա կազմված վիճակագրության մեջ ՓՄՁ-ների թիվը կարող է ավելի շատ ներկայացված լինել՝ ի տարբերություն «ձեռնարկություն» հասկացության կիրառման, որը հետևյալն է. «ձեռնարկությունը իրավաբանական անձանց ամենափոքր միացությունն է, որը հանդիսանում է ապրանքներ և ծառայություններ ստեղծող իրավակազմակերպական միավոր, որոշումների՝ հատկապես ընթացիկ միջոցների բաշխման վերաբերյալ որոշումների կայացման հարցում ունի ինքնուրույնության որոշակի աստիճան: Ձեռնարկությունը մեկ կամ մի քանի գործունեություն է ծավալում մեկ կամ մի քանի վայրերում: Ձեռնարկությունը կարող է լինել միանձնյա իրավաբանական միավոր» ([Eurostat-OECD Manual on Business Demography Statistics, 2007/](#) Եվրոստատ-ՏՀԶԿ-ի Գործարար հատվածի ժողովրդագրական վիճակագրության վերաբերյալ ձեռնարկ): Ձեռնարկությունների թվի հաշվարկում ներառվում են այն ակտիվ ձեռնարկությունները, որոնք համապատասխան տարում ունեցել են աշխատողներ և/կամ առևտրաշրջանառություն:

ՀՀ ՎԾ-ը մասնավոր հատվածի ապահոված զբաղվածությունը չափում է վարձու աշխատողների թվով: Զբաղվածների մասով տվյալների բացակայության պայմաններում (որը ներառում է ինքնազբաղվածներին և աշխատողներին) հայկական ընկերությունների աշխատանքի արտադրողականությունը հաշվարկելու համար գերփոքր ձեռնարկությունների աշխատակիցների թվին գումարվում է ոչ գործատու անհատ ձեռներեցների թիվը: Սա նախատեսված է չափազանցության միտումը նվազեցնելու և ՏՀԶԿ երկրների հետ համադրելիությունը բարելավելու նպատակով (տես նաև ստորև):

Բացվածքն՝ ըստ ձեռնարկությունների չափի

Սույն հրապարակումը կիրառում է ձեռնարկությունների չափի հետևյալ բացվածքը.

- գործարար հատվածի կառուցվածքային վիճակագրության համար՝ գերփոքր ձեռնարկություններ (0-9 վարձու աշխատող), փոքր (10-49), միջին (50-249) և մեծ (250 և ավել վարձու աշխատող) ձեռնարկություններ:

Հնարավորության դեպքում գերփոքր ձեռնարկությունների վիճակագրության մեջ որպես առանձին ենթաշարք ներկայացվում են նաև ոչ գործատու ձեռներեցները:

- գործարար հատվածի ժողովրդագրական վիճակագրության համար՝ ոչ գործատու ձեռնարկություններ (0 վարձու աշխատող), 1-4, 5-9, 10-19, և 20 և ավելի վարձու աշխատող ունեցող ձեռնարկություններ:

«Ավելացված արժեք» փոփոխականի մասով տվյալները կազմվում են գերփոքր և փոքր ձեռնարկությունների խմբերի համար համատեղ՝ 0-49 աշխատողներ:

Աշխատանքի արտադրողականությունը

Աշխատանքի արտադրողականությունը ձեռնարկությունների մակարդակում սովորաբար չափվում է որպես ավելացված արժեքի և ձեռնարկությունում զբաղված անձանց ընդհանուր թվի հարաբերությունը: Հայաստանում, սակայն, զբաղված անձանց ընդհանուր թվաքանակի վերաբերյալ տվյալներ ներկայումս առկա չեն ըստ ձեռնարկության չափերի, և փոխարենը վարձու աշխատողների թիվն է օգտագործվում որպես աշխատանքի չափանիշ: Այսպիսով հաշվարկված աշխատանքի արտադրողականությունը չափազանցված կլինի համեմատած այլ երկրների հետ, քանի որ ինքնագրավածները հաշվի չեն առնված աշխատողների թվում, մինչդեռ նրանց ներդրումը ավելացված արժեքին ընդգրկված է վիճակագրության մեջ:

Ի՞նչ հարաբերություն ձեռնարկություններում վարձու աշխատողների և ինքնագրավածների թվի միջև:

Տարբեր երկրների տվյալները ցույց են տալիս, որ ինքնագրավածների (օրինակ՝ ձեռնարկատիրոջ չվարձատրվող ընտանիքի անդամները) թիվը մեծ ձեռնարկությունների աշխատուժի չնչին մասն են կազմում, մինչդեռ գերփոքր ձեռնարկություններում նրանց կշիռը հասնում է զգալի չափերի:

Այս տարբերությունները սակայն փոփոխական են երկրից երկիր, և կախված գործունեության տեսակից: Օրինակ՝ 2016թ. Չեխիայի Հանրապետության մշակող արդյունաբերության գերփոքր ձեռնարկություններում զբաղվածների ընդհանուր քանակը երեք անգամ գերազանցում էր վարձու աշխատողների թիվը, սակայն Միացյալ Թագավորությունում տարբերությունն ընդհամենը 6% էր:

Այսպիսով՝ ենթադրելով, որ հայաստանյան բիզնեսի աշխատանքի արտադրողականության չափազանցումը վերաբերում է հատկապես ամենափոքր ձեռնարկություններին, այս հրատարակությունում աշխատանքի արտադրողականության հաշվարկման համար ոչ գործատու անհատական ձեռնարկությունների թվաքանակը ավելացվել է գերփոքր ձեռնարկությունների վարձու աշխատակիցների թվին:

Դրամական փոփոխականներ

Դրամական փոփոխականները ներկայացված են ազգային արժույթով՝ ընթացիկ գներով կամ փոխարկված ԱՄՆ դոլարի՝ տարեկան միջին փոխարժեքով: Սպառողական գների ինդեքսը և արդյունաբերության մեջ արտադրության

միջոցների գնման գների հնդեքսը, ինչպես նաև փոխարժեքները որպես տեղեկատվություն ներկայացված են [Հավելվածում](#):

Երկրների կոդեր

Այս հրատարակության մեջ բերված ցուցանիշներում օգտագործված են հետևյալ ISO կոդերը (ISO3).

ARM	Հայաստան	GRC	Հունաստան
AUT	Ավստրիա	HUN	Հունգարիա
BEL	Բելգիա	ISL	Իսլանդիա
BGR	Բուլղարիա	ISR	Իսրայել
CHE	Շվեյցարիա	ITA	Իտալիա
CZE	Չեխիայի Հանրապետություն	LTU	Լիտվա
DEU	Գերմանիա	LUX	Լյուքսեմբուրգ
DNK	Դանիա	LVA	Լատվիա
ESP	Իսպանիա	NOR	Նորվեգիա
EST	Էստոնիա	NZL	Նոր Զելանդիա
FIN	Ֆինլանդիա	POL	Լեհաստան
FRA	Ֆրանսիա	PRT	Պորտուգալիա
GBR	Միացյալ Թագավորություն	SVN	Սլովենիա

Տնտեսական գործունեության ոլորտներ

Այս զեկույցում Հայաստանի տվյալներում ներկայացված է տնտեսության գործարար հատվածը, մասնավորապես Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ISIC) 4-րդ վերանայված տարբերակի B-N բաժինները, S95 մասը, K բաժնի բացառությամբ, որը վերաբերում է ֆինանսական միջնորդության ծառայություններին:

SՀԶԿ երկրներում գործարար հատվածի ժողովրդագրական տվյալներում ներառված են ֆինանսական միջնորդության ծառայությունները, բացառություն է կազմում հոլդինգների գործունեությունը (ISIC 4-րդ վերանայված տարբերակ, K642 խումբ):

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ISIC) 4-րդ վերանայված տարբերակ	
A (01-03)	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն
B (05-09)	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում
C (10-33)	Մշակող արդյունաբերություն
D (35)	Էլեկտրականության, գազի, ջրաբերության և լավորակ օդի մատակարարում
E (36-39)	Ջրամատակարարում. կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում
F (41-43)	Շինարարություն
G (45-47)	Մանրածախ և մեծածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում
H (49-53)	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն
I (55-56)	Կացության և հանրային սննդի կազմակերպում
J (58-63)	Տեղեկատվություն և կապ
K (64-66)	Ֆինանսական և ապահովագրական գործունեություն
L (68)	Անշարժ գույքի հետ կապված գործունեություն
M (69-75)	Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն
N (77-82)	Վարչարարական և օժանդակ գործունեություն
O (84)	Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովություն
P (85)	Կրթություն
Q (86-88)	Առողջապահություն և բնակչության սոցիալական ապաստարկում
R (90-93)	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ
S (94-96)	Սպասարկման այլ ծառայություններ
S95	Համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում
T (97-98)	Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար
U (99)	Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն

Մահմանումներ

Մահմանումները վերցված են հետևյալ աղբյուրներից.

- ՄԱԿ ԵՏՀ (2015թ.), Ուղեցույց վիճակագրական բիզնես ռեգիստրների վերաբերյալ/ UNECE (2015), Guidelines on Statistical Business Registers, https://www.unece.org/fileadmin/DAM/stats/publications/2015/ECE_CES_39_WEB.pdf.
- ՏՀԶԿ (2010թ.), Գործարար հաստիքի կառուցվածքային և ժողովրդագրական վիճակագրություն, ՏՀԶԿ հրատարակչություն, Փարիզ/OECD (2010), Structural and Demographic Business Statistics, OECD Publishing, Paris, <http://dx.doi.org/10.1787/9789264072886-en>.
- ՏՀԶԿ (2007թ.), Եվրոստատ/ՏՀԶԿ Գործարար հաստիքի ժողովրդագրական վիճակագրության ձեռնարկ, ՏՀԶԿ հրատարակչություն, Փարիզ/OECD (2007), Eurostat/OECD Manual on Business Demography Statistics”, OECD Publishing, Paris, <http://www.oecd.org/std/39974460.pdf> :

Ակտիվ ձեռնարկություն. ձեռնարկություն, որը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ունեցել է շրջանառություն կամ աշխատողներ:

Աշխատողներ (վարձու աշխատողներ). անձինք, որոնք աշխատում են գործատուի մոտ և ունեն աշխատանքային պայմանագիր, ստանում են փոխհատուցում՝ աշխատավարձ, վարձատրություն, վճարում, պարգևատրում, հատավարձով վարձատրություն կամ բնաիրային փոխհատուցում:

Գործատու ձեռնարկություն. ձեռնարկություն, որը հաշվետու ժամանակահատվածի որևէ պահին ունեցել է աշխատողներ:

Ոչ գործատու ձեռնարկություն. ձեռնարկություն, որը հաշվետու ժամանակահատվածում աշխատող չի ունեցել:

Ձեռնարկության ծնունդ. արտադրական գործոնների համախմբի ստեղծում՝ որևէ այլ ձեռնարկություն չընդգրկելու պայմանով: Ստեղծված ձեռնարկությունների թվաքանակում չի ներառվում միաձուլման, լուծարման, մասնատման կամ մի շարք ձեռնարկությունների վերակազմավորման կամ պարզապես գործունեության տեսակի փոփոխության միջոցով ձևավորված ձեռնարկությունները:

Ձեռնարկությունների ծննդյան գործակիցը . Այս ցուցանիշը համապատասխանում է ստեղծված ձեռնարկությունների թվին՝ ներկայացվելով որպես տոկոսն ակտիվ ձեռնարկությունների կազմում:

Ձեռնարկությունների մահ. Արտադրական գործոնների համախմբի լուծարում՝ որևէ այլ ձեռնարկություն չընդգրկելու պայմանով: Մահացած ձեռնարկությունների թվաքանակում չեն ներառվում միաձուլման, կլանման, լուծարման, ձեռնարկությունների վերակազմավորման կամ գործունեության տեսակի փոփոխման հետևանքով փակումները:

Ձեռնարկությունը գրանցվում է մահացած ձեռնարկությունների ցանկում միայն եթե փակվելուց հետո երկու տարվա ընթացքում այն չի վերսկսում իր գործունեությունը: Նույն տրամաբանությամբ՝ երկու տարվա ընթացքում գործունեության վերսկսումը չի հաշվառվում որպես ձեռնարկության ստեղծում:

Ձեռնարկությունների մահվան գործակիցը. Այս ցուցանիշը համապատասխանում է փակված ձեռնարկությունների թվաքանակին՝ ներկայացվելով որպես տոկոսն ակտիվ ձեռնարկությունների կազմում:

Աշխատանքի արտադրողականություն. Այս փաստաթղթում աշխատանքի արտադրողականությունը հաշվարկվում է որպես ավելացված արժեքի և զբաղվածության հարաբերակցությունը: Հայաստանի պարագայում զբաղվածությունը հաշվարկվում է վարձու աշխատողների թվով, որի մեջ հաշվի առնված չեն անհատ ձեռներեցները, ինչպես նաև փոքր բիզնեսի տերերի ընտանիքի չվարձատրվող անդամները, որոնց տված արդյունքը ընդգրկվում է ավելացված արժեքը հաշվելիս: Այս հակասությունը մեղմելու և ՏՀԶԿ երկրների հետ համադրելիությունը լավացնելու նպատակով գերփոքր ձեռնարկություններում աշխատանքի արտադրողականության հաշվարկի համար օգտագործվող զբաղվածության ցուցանիշը ճշգրտվել է, ներառնելով նաև ոչ գործատու անհատ ձեռներեցների թվաքանակը:

